ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՊԱՐՈՆ Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մանուկյան,

Ծանոթանալով ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքում տեղադրված «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկատվության գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև տեղեկատվության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծին (այսուհետ՝ Նախագիծ), անհրաժեշտ ենք համարում նախարարության քննարկմանը ներկայացնել մեր մտահոգությունները սույն Նախագծի, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների և փաստաբանների կողմից տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացման խոչընդոտի վերաբերյալ:

Նախ ողջունելի է, որ նախարարությունը վերջապես ձեռնամուխ է եղել մի Նախագծի մշակմանը, որը պետք է մշակված և ընդունված լիներ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի (ասյուհետ՝ Օրենքի) ընդունումից անմիջապես հետո: Ինչևէ.

Սույն Նախագծի վերաբերյալ նախարարությունը ներկայացրել է հիմնավորում սույն որոշման ընդունման անհրաժեշտության մասին, որտեղ նկարագրել է ներկա իրավիճակը և առկա խնդիրները, մասնավորապես օրենքի 5-րդ հոդվածի և 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն ՀՀ կառավարությունը պետք է սահմանի կարգ, սակայն մինչ օրս ՀՀ կառավարությունը նման կարգ չի սահմանել:

Նախարարությունն իր հիմնավորման ակնկալվող արդյունքը բաժնում նշել է, որ սույն նախագծի ընդունման արդյունքում կապահովվի նաև յուրաքանչյուր անձի՝ իր փնտրած տեղեկատվությանը ծանոթանալու և/կամ դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ տեղեկատվության տնօրինողին դիմելու և այդ տեղեկատվության ստանալու իրավունքների առավել արդյունավետ իրականացումը:

Սակայն ըստ մեր ունեցած պրակտիկայի Հայաստանում ոչ միանշանակ է ընկալվում և պաշտպանվում յուրաքանչյուր ոքի իր փնտրած տեղեկատվությանը ծանոթանալու և/կամ դա ստանալու իրավունքը, մասնավորապես հասարակական կազմակերպություններն ու փաստաբաններն իրենց իրավապաշտպան գործունեության ընթացքում միշտ բախվում են սույն խնդրի հետ, որը կարծես թե օրենսդրորեն կարգավորման կարիք ունի:

Իրավակիրառ պրակտիկայում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները հաճախ նշյալ սուբյեկտների հարցումներին պատասխանում են, որ «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի համաձայն չեն կարող տրամադրել տվյալ տեղեկատվությունը: Արդյունքում՝ ՀՀ սահմանադրության 27.1-րդ հոդվածով[1] երաշխավորված, ինչպես նաև «Տեղեկատվության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով[2] սահմանված իրավունքը չի պաշտպանվում:

Զարմանալի է, որ նախարարությունն իր հիմնավորումներում ամբողջական չի ներկայացրել Հայաստանում սույն ոլորտում ներկա իրավիճակը և առկա խնդիրները, ըստ որի հասարակական կազմակերպություններն իրենց շահառուների, իսկ փաստաբաններն իրենց վստահորդների իրավունքները պաշտպանելիս չեն կարողանում նրանց կամ նրանց հուզող հարցի վերաբերյալ տեղեկատվություն ստանալ, ինչն էլ խոչընդոտ է հանդիսանում ՀԿ-ների և փաստաբանների հետագա իրավապաշտպան գործունեության համար:

Ավելորդ չեմ համարում հիշատակել «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ հասարակական կազմակերպությունները շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպության՝ հասարակական միավորման, տեսակ է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա, օրենքով սահմանված կարգով, միավորվել են ֆիզիկական անձինք .... **իրենց և այլոց**

---

[1] **Հոդված 27.1.** Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

[2] **Հոդված 6 (1)** Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:

իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հասարակությանը, նրա առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով:

Նույն Օրենքի 15-րդ հոդվածի՝ Կազմակերպությունը, իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝ (3) օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում:

Նույնը կարելի է նշել փաստաբանների համար, ըստ որի նրանք իրենց վստահորդներին փաստաբանական ծառայություն մատուցելիս, մասնավորապես դատական ներկայացուցչություն, նախևառաջ պետք է ձեռնամուխ լինեն ինքնուրույն, օրենքով սահմանված կարգով, ձեռք բերեն փաստաթղթեր (ապացույցներ) և պատշաճ դիմում, հայցադիմում, վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ կազմեն և ներկայացնեն ՀՀ դատական ատյաններ: Այստեղ խոսքը ոչ թե նրա վստահորդի մասին, այլ վստահորդի իրավունքները պաշտպանելիս նրա հակառակորդի (պատշաճ պատասխանող ճանաչելու) մասին տեղեկատվություն ստանալուն է վերաբերում: Օրինակ՝ ալիմենտի և/կամ գույքային պահանջների (ժառանգության իրավունքի ճանաչման, ընդունման, գրավի, արգելանքի և այլ իրավահարաբերություններից ծագող վեճերով), երբ փաստաբանները չունենալով համապատասխան հարցման պատասխանը չեն կարողանում պատշաճ հայցադիմում ներկայացնեն դատարան:

Այսպիսով, կարծում ենք, որ նախարարությունը պետք է սույն Նախագծի հետ միասին ուսումնասիրի նաև մեր կողմից բարձրացված հիմնախնդիրը և մշակի համապատասխան իրավական ակտերի նախագծեր, որոնց ընդունման արդյունքում հասարակական կազմակերպություններն ու փաստաբաններն, իրենց իրավապաշտպան գործունեության ընթացքում, առանց որևէ խոչընդոտի կարող են իրացնել ՀՀ սահմանադրության 27.1-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով երաշխավորված իրենց իրավունքը:

Եթե այս իրավունքն օրենքով սահմանափակված է վերոնշյալ սուբյեկտների համար, ապա կարելի է նշել, որ չնայած Հայաստանը

հռչակված է իրավական և ժողովրդավարական երկիր, բայց, այնուամենայնիվ, նրա քաղաքացիական հասարակության կառույցների իրավունքները մասնակի սահմանափակված են, արդյունքում նրանց դերի ու նշանակության մասին խոսելը դառնում է ավելորդ:

Ելնելով վերաշարադրյալից խնդրում եմ Ձեզ քննարկման առարկա դարձնել մեր կողմից բարձրացված հիմնախնդիրը և փորձել իրավական լուծումներ գտնել դրանց վերաբերյալ, մասնավորապես հանդես գալ օրենսդրական առաջարկությամբ և համապատասխան օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծեր մշակել և ներկայացնել շահագրգիռ հանրությանը՝ հանրային քննարկման:

Ակնկալում եմ Ձեր գործուն միջամտությունն ու աջակցությունը սույն հիմնախնդրի կարգավորման հարցում:

«Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների
պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ

03.06.2015

Կատ. ՝Մերի Խաչատրյան
Կենտրոնի իրավաբան